

## ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՂՐԻ Զ.Ի ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝

Ներկայումս խիստ նշանակալից է Հյուսիսական Ամերիկայի Միացյալ նահանգների հոգևոր դասի ուղղված կողը, ի պատասխան այն ստորագրությանը, որ արել է 1947 թվին Ռոյ Հովլարդի թյուքական ժուռնալիստներին։ Եթզ ժուռնալիստները հարցնում են նրա կարծիքը հայկական դատի ու հայերի մասին, նաև տմարդութեն պատասխանում է։ «Նշանակություն մի՛ տաք։ Մենք հայերին մարդ էլ չենք համարում։ Սակայն ովքե՞ր են Ռոյ Հովլարդները և նրա անվանած «մենք» են ոչ մարկային կյանքն ու իրավունքները ուսնահարող, բրոնզության, արյունի և սպանության հետ ընկերացող մի խումբ հակաքրիստոնյա մարդիկ, որոնք առանց ամաշելու հանդես են գալիս ամերիկյան քրիստոնյա բարի ժողովրդի, Ամերիկայի արդարանիտ հովարդ դասի անումից, որոնք իրենց ձայնն են բարձրացրել և այժմ համառությամբ պահանջում են հայ դատի արդար լուծումը։

Այս իսկ ըմբռնուաններով, ներկա ժամանակաշրջանի համար պատմական խոշորագույն երեսլթ է Հայրենադարձը, որին Վեհափառ Հայրապետական կերպ աշխատել է նպաստել։ Դեռևս 1946 թվին, նա իր սրբաւտառ կոնդակում հատնանշել է։ «Ներկա դատի ներկա հայ կյանքի խոշորագույն երեսլթներից գլխավորն է։ Նա մեր անցյալ թշվառ կյանքի անվի թեքումն է դեպի բախտավոր կյանքը։ Նա ազգահավաքման սկիզբն է դնում հայրենի երկրում, որ պիտի նպաստեն հայ ժողովրդի աճման, զորացման

և նորա կովտուրական վերելքին, նաև պիտի ծառայի նորա արդար դատի իրացման։ Յուրաքանչյուր հայ ազգասեր և հայրենասեր մարդու բնական և բարոյական պարտքն է նպաստել այդ ազգային շարժման։

Վեհափառ Հայրապետի ատգասիրությունը ծավալում է և ըստ ամենայնի ընդունկում է հայ կյանքի բոլոր բնագավառները, այն մտածված, շափած ու կշռված հայրենասիրություն է, որ ունի իր իրական հողը, իրական հոգեանունքությունը և գործուն ուժը։ Այն բացառակապես հեռու է չնախատեսված հանգամանքներից, երազներից, ցնորքներից ու նարեկություններից, որոնք մի ամբողջ հիմնամյակ արյունությունն մեր երկիրն ու պատմությունը, ծվատեցին մեր ժողովրդին, բնաշնչան ենթակեցին մեր հազարամյակներ պարունակող մշակույթը։

Սակայն հայ ժողովուրդը իր պատմության վերջին 30-ամյակում իմաստավորվեց և գիտակցության եկավ։ Նա վերածնվեց և վերապազ իրեն։ Եվ այժմ ո՞չ ոք կարող է շեղել նրան իր նոր ճանապարհից, երշանկության և բախտավորության ճանապարհից, ու ո՞չ ոք կարող է մեղմել նրա արդար ցանումն ու զայրությը, իր տոնահարված իրավունքների պահանջի առթիվ։

Պետք է նշել, որ Վեհափառ Հայրապետի իշխան ու ակնկալությունները մեր եկեղեցու վերակառուցման ասպարեզում, շնորհիվ փորձադրված միջցառուաների, ընդհանրապես արդարացան։ Մեր թեմերի ղեկավարությունը, թեմական պատգամավորական ժողովների գումարուանները և թեմական խորհուրդների, եկեղեցական հոգաբարձությունների ընտրությունները և գործի գլուխ

1. Շարումակած 1950 թվի հոմվար-փետրվար և մարտ-ապրիլ համարներից և վերը.



ՎԵՆԱՓԱՆ-Ը ԱՇԽԱՏԱՄԵՂԱՆԻ ԱՆԱԶ

գալը, մեծավ մասսամբ մտել են իրենց հունի մեջ և ընթանում են կանոնավոր:

Կապը Սփյուռքի հայության հետ, մեր թեմակալ առաջնորդների և պատրիարքությունների միջոցով, ավելի քան ամբապընդվել է և Ամենայն Հայոց Հայրապետի հմայքնու իմաստնավորությունը դարձել է ավելի քան համատարած: Նա արդեն իսկ նվաճել է ժողովրդականությունը իր ցուց տված աշակորչ զեկավարությամբ՝ կրոնական և ազգային գործերում: Ի պարծանա հայ հոգեկորության և մեր թեմակալ առաջնորդների, պիտի ասել որ նրանք, ըստ ամենայնի, յուրացրել են Վեհափառ Հայրապետի բոլոր սկզբունքները և ծրագիրը և ունեն ճիշտ նույն մոտեցումն ու ընթանումը, ինչ որ ոմի Վեհափառ Հայրապետը, լինի այդ մեր պետականության է՛լ ավելի հզորացման գործում, ազգահավաքի խնդրում և մեր դատի լուժման ճանապարհում: Այսպիսի ինքարելումունքը բխում է այն երկու կարևոր սկզբունքներից, որ առաջադրել և արգեն հրականացրել է Վեհափառ Հայրապետը՝ «Եկեղեցական միասնությունն և ազգային միասնություն» վեհ արտահայտությամբ ու գաղափարաբանությամբ:

Վեհափառ Հայրապետի ծավալուն գործունեության մեջ առանձնապես աշխի է զարնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սահմանադրության մշակումն ու կազմումը: Նա ավարտել է Սահմանադրության նախադի կազմումը և պատրաստել է նրան նվիրված մի ընդարձակ ուսումնասիրություն: Այս ստվարածավալ աշխատասիրությունը որքա՞ն անքուն գիշերներ ու օրեր է խլել Մեծագործ Հայրենասերից, որքա՞ն եռանդ և ավլուն է մաշել նա այս հոյակապ գործը պատրաստելիս, որքա՞ն մտահոգություններ ու հուզել է ապրել նա մեր Եկեղեցու ամրապինդ պատվանդանը կառուցելիս:

Ըստ սմին, պետք է նշել, որ Հայաստանյայց Եկեղեցու սահմանադրությունը դարեր շարունակ գործադրվել ու պահպանվել է մեր թեմերում ու Եկեղեցիներում, համայն հայ ժողովրդի հոգեկոր կյանքում, սուկայն ոչ միանման և ոչ լրիվ կերպով ամենուրեք, Վեհափառ Հայրապետի ուսումնասիրության կարևոր և պատմական նշանակությունն այն է, որ նա Հայ Եկեղեցու Սահմանադրությունը մի հայտարարի կ բերել, հաշվի առնելով ոչ միայն մեր Եկեղեցու բնդհանուր պայմանները և հիմնական սկզբունքները, այլև մեր թեմերի և մեր ժողովրդի բացառիկ հանգամանքները: Վեհամշակված և ամբողջացրած այս Սահմա-

նադրությունը կարող է գործադրության դրվել Ազգային-Եկեղեցական ժողովի հավանությամբ և Վեհափառ Հայրապետի հաստատումից հետո միայն: Սակայն նախարան այն Ազգային-Եկեղեցական ժողովի ներկայացնելը, անհրաժեշտաբար այն պիտի ներկայացվի հայ ժողովրդի քննարկմանը: Նոր Սահմանադրությունը կուղարկվի բոլոր թեմերին և առաջնորդներին, ի տեղեկություն և ի քննություն: Այն կկարգացվի և կուտամնասիրվի թեմական ազգային մարմինների կողմից (պատգամավորակ և ժողովներում, թեմական խորհուրդներում, Եկեղեցական հոգաբարձություններում և այլն), նույնապես մամուկի և անհատ ուսումնասիրների կողմից, որից հետո Վեհափառ Հայրապետին կմնա կրկին վերանայել այն, վերջնական խմբագրության համար, հաշվի առնել որոշ կարեվոր դիտողություններն ու հավելումները, եթե իրոք նրանք մեր Եկեղեցու և ժողովրդի հոգեկոր կյանքի համարվեն, այնուհետև կրցն մարմի Ազգային-Եկեղեցական ժողովը և ժողովի հավանությունից հետո, Վեհափառ Հայրապետը համարվել կոնդակով կպատվիրի այն գործադրել և կիրառել մեր Եկեղեցական կյանքում, որպես Հայաստանյայց Եկեղեցու հիմնական օրենքի:

Երկրորդ հոյակապ աշխատասիրությունը, որ ավարտել է Վեհափառ Հայրապետը, այդ Հայ Եկեղեցու բարենորոգման ծրագիրն է: Այս մասին Վեհափառ Հայրապետը զիշուցել է 1932 թվին երջանկահիշատակ Խորեն Կաթողիկոսի կաթողիկոսական ընտրության առթիվ գոամարված Ազգային-Եկեղեցական ժողովում, նշել է այն բարենորոգումները, որոնք անհրաժեշտաբար պիտի կատարվեն մեր Եկեղեցական կյանքում՝ Եկեղեցին ժողովրդին վ' ավելի մերձեցնելու նկատառումով: Կյանքը հարատէ շարժվում է և փոփոխվում: Բնականարար, Եկեղեցին չի կարող բարացած վիճակում մնալ. նա ևս որպես համարակական ուժ, պետք է շարժվի կյանքի հետ, դառնալով կյանքի համար ավելի քան կենտումակ:

Վեհափառ Հայրապետի ծրագրային հարցերից անկատար մնաց միայն տպարանի հարցը: 1945 թվին, Համազգային-Եկեղեցական ժողովում, Թեյրութի պատգամական Մկրտիչ Մորլանը Խոստացավ մի տպարան նվիրել Մայր Աթոռին, մի քանի ամսից հետո այն Ս. Էջմիածին ուղարկելու պայմանով: Սակայն բոլորվեց արդեն հինգ տարին և խոստացված տպարանը չեկավ: Կարծում ենք, Վեհափառ Հայրապետը վաղուց ի վեր լուծած կլիներ նաև տպարա-

նի խնդիրը, եթե երբեք թերահավատ լինեց խոստացված նվիրատվության հանդեպ: Իթե Տիար Մկրտիչ Մարլանը ցանկություն կամ հնարավորություն շունենար իր խոստումը կատարելու, Հետևապես նա շատոնց այդ մասին պիտի հայտնած լիներ Վեհափառ Հայրապետին, մասնավանդ որ Վեհի ներկայացուցիչները լինելով կրթանանում, տեսակցություն են ունեցել Տիար Մարլանի հետ, որը հայտնել է նրանց, թե նորագոյն սիամակմի մեջենաներով կազմված մի տպարանի պատվեր արդեն տրված է լուղոնում:

Կարծում ենք, և ունենք հաստատ հավատ, որ Վեհափառ Հայրապետը մոտիկ ժամանակներում կլուծի նաև այս հարցը:

Բնական է, որ Մայր Աթոռի պահանջումը իր ազգային ծրագրով պիտի հոգա համատացյալ հայ ժողովուրդը։ Վեհափառ Հայրապետից կյանքը պահանջում է գործ, հետևողական զեկավարություն, պարմանների և հնարավորությունների ստեղծում, որ արդեն ամենայն բարեխնդությամբ կատարված է։ Հայ հավատացյալ ժողովորդին է մնում ատեղծակած պայմանների և հնարավորությունների պահպանումն ու գարփացումը և նրանց լիակատար գործադրումը։

Սակայն այսօր, Ամենայն Հայոց իմաստնագույն Կաթողիկոսի՝ Նորին Սբռագնություն S. S. Գեորգ Զ.ի 80-ամյա հորելյանական Հանդիսի տոնակատարության առնչությամբ, Հայ ժողովորդի Հոգացողությունը պետք է շոշափերի և ակնառու Հանդիսանա:

Հայոց Հայրապետության և Մայր Աթոռ  
Ս. Էջմիածնի պահպանումը և հգորացումը  
հայ ժողովրդի արժանապատվության, խզճի  
և պատվի գործն է, ինչպես և այն լուրջ  
փիտակցականությունը, որ հնարավորություն  
որվի Հայոց Հայրապետության և Ս. Էջ-  
միածնի, կատարելու անցյալի իր փառա-  
լոր դերը, այսինքն՝ ծառայինու իր Հայրե-  
նիքին, իր հայրենաբնակ և գաղթաշնարհի  
եղողովովին և Հայաստանյայց Առաքելա-  
ւան Սուրբ Եկեղեցուն:

Անշուշտ մեր այս համառոտակի նշում-  
մերով չի պահպան Ամենայն Հայոց Վեհա-  
իտ Հայրապետի կենտագրությունը։ Սույն  
ամառոտագրությունը նրա շշշափած և ըն-  
դիրների ուրվագծումն ու մեկնաբանումն է  
Միայն, բայց ոչ նորին Սրբության գործու-  
եության լրիկ ամփոփագիրը։ Վեհափառ  
Հայրապետի գործումեռությունը կարուտ է  
որկար ժամանակի և ուսումնափրության,  
իսկ ուրվագիր կազմված է նրա գործու-

նեռվթան 80-ամյակի տոնակատարության  
կապակցությամբ, «Էջմիածին» ամսագրի  
ընթերցողներին և հայ հավատացյալներին  
Մեծ Հայրենական կյանքին ծանոթացնելու  
նպատակով:

Այս խնդիրները, որ մենք առաջ ենք քա-  
շել այս հողվածում և մեր տկար ուժերով  
փորձել ենք մեկնաբանել, շատ կարճատէ  
ժամանակի, ընդամենը հինգ-վեց տարվա  
արդյունք են: Վեհափառ Հայրապետի գոր-  
ծունեալիքան արշալույսները դեռ նոր-նոր  
պիտի բացվեն Հայ Եկեղեցու հորիզոնում:

Կատարյալ միահոգաստթիցը ունենք, որ  
Վեհափառ Հայրապետը Հայաստանյաց Ե-  
կեղեցու Սահմանադրության և բարենորոշ-  
չական ծրագիրներով նոր դարավոկս պի-  
տի բաց անփ մեր Եկեղեցու առցել:

Այդ են ներշնչում մեզ նրա փիզիկական, հոգեկան և մտավոր առողջ վիճակը: Նույնպես համոզված ենք, որ ծերութափարության առավետը իր բոլոր թեմերով և թեմակալ առաջնորդներով, հայ ժողովրդի եկեղեցական և ազգային միասնականությամբ, հայ ժողովրդի համատրած վատահությամբ և ուժերով, էլ ամենի պիտի խորացնի ու զարգացնի մեր Եկեղեցու «Հայ ժողովրդի» հայ նորա համար, հայ Հայրենիքի հետ և նորա համար» սրբազն կտակը, մեր պատիրի և պատմության ավանդը, դարձնելով այն մեր ժողովրդի մեջ միս ու արյուն, դարձնելով այն հայրենական սրբություն:

Այս ուղղությամբ վեհափառ Հայրապետը բազմիցն նշել է. «Հայաստանյաց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին ու Տիայն Հոգևորական Հատատություն է, այլև Միաժամանակ Ազգային-Հայրենական Ազգային-Կրոնական այս երկակի ընության ներդաշնակ միասնության մեջն է բարոյական հմայքն ու պատմական խորհուրդը ուսափորչածիմն ազգապահ Հայ Եկեղեցու, որի անարատության և վեհիրավության համար դարձր շարունակ Հայածիւ, մարդունչել և մարտիրոսացել է բազմաշարչարայ Փողոփորք»:

Ծնորժակորելով մեր սիրեցյալ Հայութ-  
պետին իր 80-ամյա հոգեբանի առթիվ, ա-  
ռողբեն առ Աստված, որ նա իր հավերժա-  
լան զորովթյամբ աշակից ու զորավիդ լինի  
Սորին Սուրբ օծությանը իր հայրենանվեր ու  
կեղեցան վեր գործունեությանը մեջ, տարով  
իրան անախտ և երկար կյանք, իր բազ-  
մաշարչար ժողովրդին, Սփյուռքի իր թա-  
փառական հոտին Ավետյաց Երկիրը ա-  
ռաջնորդելու, ամեն:

